

ԿԱՐԾԻՔ

Էրիկ Ջավենի Մարտիրոսյանի «Դեռահաս դպրոցականների ֆիզիկական պատրաստության օպտիմալացումն աթլետիկական վարժությունների կիրառմամբ»՝ ներկայացված ԺԳ .00.02 «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» (ֆիզիկական կուլտուրա) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման

Աճող սերնդի առողջության, ֆիզիկական պատրաստության հիմնախնդիրները միշտ գտնվել են տարբեր մասնագետների մշտական ուշադրության կենտրոնում:

Դպրոցական տարիքը՝ համարվելով երեխաների և պատանիների մտավոր, ֆիզիկական, հոգեկան, սոցիալական զարգացման բարենպաստ ժամանակահատված, առանձնանում է համակողմանի զարգացման գործընթացի արդյունավետ կազակերպման կարևորությամբ:

Համակողմանի զարգացման կառուցվածքում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում սովորողների ֆիզիկական վիճակի բարելավման հիմնախնդիրը:

Դպրոցի պայմաններում երեխաների և դեռահասների ֆիզիկական դաստիարակության բազմաբնույթ խնդիրները իրականացվում են «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի ծրագրի հիման վրա: Սակայն այսօր ծրագրի իրականացման արդյունքում չի հաջողվում արդյունավետ լուծել հանրակրթական դպրոցի սովորողների ֆիզիկական դաստիարակության բազում հարցեր: Դա առավելապես կապված է դպրոցականների ոչ բավարար ֆիզիկական պատրաստվածության մակարդակի հետ: Պատճառները բազմաթիվ են և տարաբնույթ:

Այս համատեքստում դպրոցականի ֆիզիկական վիճակի բարելավումը՝ հիմնված պատրաստության գործընթացի նոր մոտեցումների, մեթոդների, կազմակերպման արդի եղանակների, տարատեսակ վարժությունների օգտագործման բազմազանության վրա, կարող է էականորեն նպաստել վերոնշյալ հիմնախնդիրների արդյունավետ լուծմանը: Պետք է նշել, որ «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի բաժինների շարքում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում աթլետիկա մարզաձևը՝ որպես ծրագրի պարտադիր և կարևոր բաղադրիչ:

Է. Մարտիրոսյան ատենախոսական աշխատանքի առանցքում հենց նման հիմնախնդրի լուծմանը ուղղված նոր մոտեցման գաղափարն է, որը հիմնվում է դեռահաս դպրոցականների աթլետիկական արտադասարանական պարապմունքների ներդրմանը ֆիզիկական դաստիարակության համակարգում:

Սա վկայում է Է. Մարտիրոսյանի հետազոտության արդիականության և ստացված արդյունքների գործնական կարևոր նշանակության մասին:

Նպատակադրվելով մշակել և գիտափորձով բացահայտել հանրակրթական դպրոցի դեռահասների աթլետիկական արտադասարանական պարապմունքների բովանդակությունը և անցկացման մեթոդիկան հայցորդը դասական եղանակով իրականացրել է բազմափուլային հետազոտություն:

Ակզբնական շրջանում հեղինակը ուսումնասիրել է հիմնախնդրին վերաբերող գիտամեթոդական գրականություն, ինչի արդյունքում հնարավոր եղավ պարզաբանել դպրոցականների ֆիզիկական դաստիարակության համակարգում կիրառվող ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաները: Մեծ ուշադրություն է դարձրել հայցորդը աթլետիկական վարժությունների դերին, տեղին և կարևորությանը դպրոցականների ֆիզիկական դաստիարակության համակարգում՝ ուսումնասիրելով այդ նպատակով բազում գրական աղբյուրներ:

Ատենախոսության տեսական վերլուծություն բաժնում ներկայացված են նաև արտադասարանական պարապմունքների դերը և կազմակերպման պայմանների վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև դրանց կազմակերպման մոտեցումները՝ պայմանավորված դպրոցականների սեռատարիքային առանձնահատկություններով: Հետազոտության ընթացքում մեծ թվով երկսեր աշակերտների ներգրավումը, մեթոդների գրագետ ընտրությունը, հանրապետության տարբեր մարզերի հանրակրթական դպրոցների 260 ուսուցչի հարցումը և գիտափորձում 10-13 տարեկան 360 դեռահասի ներգրավումը թույլ տվեցին ստանալ օբյեկտիվ և հավաստի արդյունքներ:

Ատենախոսության 2-րդ և 3-րդ գլուխներում հայցորդը ներկայացնում է և մեկնաբանում հետազոտության արդյունքում ստացված թվային տվյալները:

Մասնավորապես է. Մարտիրոսյանը պարզաբանել է 10-13 տարեկան երկու սեռի դեռահասների ֆիզիկական զարգացման, ֆիզիկական պատրաստվածության առկա վիճակը: Դրա հիման վրա հայցորդը մշակել է ֆիզիկական զարգացման և ֆիզիկական պատրաստվածության մոդելային սանդղակներ, որոնք հետագայում կիրառել է մանկավարժական գիտափորձում: Դրա հիման վրա պարզաբանվել է մշակված սանդղակների օբյեկտիվությունը և տեղեկատվության բարձր աստիճանը:

Նախնական հետազոտության արդյունքների վերծուծության հիման վրա հայցորդը մշակել է դեռահասների ֆիզիկական պատրաստվածության բարելավմանն ուղղված արտադասարանական ուսումնամարզական աշխատանքների ծրագրի բովանդակությունը: Ծրագրում պլանավորվել են առավելապես վազքային, ցատկային և նետումային վարժություններ, որոնք մանրամասն ներկայացվել են դասի կոնսպեկտներում անհրաժեշտ չափավորումներով և մեթոդական ցուցումներով:

Մշակված մարզական ծրագրի 8 ամսվա փորձարկման արդյունքում է. Մարտիրոսյանը արձանագրել է ուսումնասիրված ցուցանիշներում դրական տեղաշարժեր: Փորձարարական դասարանում ուսումնասիրված ցուցանիշների դրական տեղաշարժերը հեղինակը ներկայացրել է գծագրերի տեսքով, ինչն արդյունքներն ավելի տեսանելի և պարզ է դարձնում: Հավելենք, որ դրական փոփոխություններ են տեղի ունեցել նաև ստուգողական խմբի 5-7-րդ դասարանների աշակերտների տվյալներում, սակայն անհամեմատ քիչ քանակով և փոքր մեծությամբ: Դրա հետ մեկտեղ պարապմունքների ընթացքում կիրառված վարժությունները դրական են ազդել ուշադրության կենտրոնացման և ընկալման ցուցանիշների վրա:

Պրակտիկ մոտեցում է ցուցաբերել հայցորդը արտադասարանական պարապմունքների վերջնարդյունքների՝ օգտագործելով ստացված տվյալները դեռահասների սպորտին կողմնորոշման համար:

Հարկ է նշել հետազոտության կազմակերպման հստակ տրամաբանությունը և գրագետ իրականացումը: Առանձնահատուկ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ հայցորդը բացահայտել է նաև նոր փաստեր, որոնք վկայում են առանձին շարժողական ընդունակությունների որոշակի բարելավման մասին:

Դա որոշ չափով հերքում է դպրոցականների տարեցտարի վատթարացող ֆիզիկական պատրաստվածության մակարդակի մասին գիտական գրականության մեջ զետեղված տեղեկությունները:

Կարևորելով կատարած հետազոտական աշխատանքը և ստացված արդյունքները հարկ է նշել որոշ նկատառումներ, որոնք պարզամանման կարիք ունեն.

1. Հետազոտական աշխատանքի տեսական բաժինը ավելի խորը ներկայացնելու առումով նպատակահարմար կլիներ ուսումնասիրել արտադասարանական լրացուցիչ պարապմունքների փորձը՝ կապված այլ մարձածների կիրառման հետ:
2. Սոցիոլոգիական հարցման թերթը կազմելիս անհրաժեշտ է պահպանել դրա մշակմանը ներկայացվող պահանջները: Մասնավորապես, կազմել նախաբան, որտեղ կբացահայտվեր հարցման նպատակը և կտրվեին լրացման համար անհրաժեշտ ցուցումներ:

Ոսուցիչներին ուղղված սոցիոլոգիական հարցման հարցաշարում (էջ 69), անհասկանալի է «ինչպես են վերաբերում երեխաները աթլետիկական վարժություններին» հարցի պատասխաններից մեկի բովանդակությունը՝ «Դժվարությամբ եմ կատարում»: Որքանով է տեղին նման պատասխանի առկայությունը «Անտարբեր եմ», «Կատարում եմ դժվարությամբ» պատասխանների համատեքստում:

3. Ատենախոսը չի ուսումնասիրել դեռահաս դպրոցականների կարծիքը աթլետիկական վարժությունների տարբեր ձևերի օգտագործման վերաբերյալ: Այս հարցի պարզաբանումը լրացուցիչ և կարևոր տեղեկատվության կտրամադրեր հայցորդին փորձարարական ծրագրի բովանդակության ավելի հիմնավորված մշակման համար:
4. Փորձարարական ծրագրի երկարատև ազդեցությունը բացահայտելու և աթլետիկական պարապմունքների բացակայության դեպքում դեռահաս դպրոցականների ֆիզիկական պատրաստվածության ցուցանիշների փոփոխությունը պարզաբանելու նպատակով անհրաժեշտ էր փորձարարական ծրագրի ավարտից գոնե մեկ կիսամյակ անց կազմակերպել հետազոտվողների ևս մեկ թեստավորում: Դա լրացուցիչ կհիմնավորեր արտադասարանական պարապմունքների դերի կարևորությունը և անհրաժեշտությունը դպրոցական ֆիզիկական դաստիարակության համակարգում:
5. Նպատակահարմար կլիներ ատենախոսության մեջ ներկայացրած գործնական առաջարկությունները լինեին իրոք կոնկրետ առաջարկություններ, այլ ոչ նման

բնույթի «Մշակել մարզային աշխատանքի բովանդակությունը և ծավալը վազքային, ցատկային և նետումային վարժությունների օրինակով»:

6. Ճիշտ կլիներ գիտափորձի արդյունքում ուշադրության կենտրոնացման և ընկալման ցուցանիշների բացահայտված տեղաշարժերը (էջ 105) հիմնավորել համապատասխան մաթեմատիկական գործիքակազմի կիրառմամբ՝ մասնավորապես միջին տվյալների միջև տարբերության հավաստիության հիման վրա:

Սակայն վերոնշյալ նկատառումները էական չեն և չեն անդրադառնում իրականացված մեծածավալ հետազոտության որակի վրա: Ատենախոսությունը գրված է գրագետ, խորը տրամաբանական, պարզ լեզվով: Առաջադրված խնդիրները լիովին լուծված են, եզրակացությունները ձևակերպված են հստակ ու արտացոլում են հետազոտության արդյունքները և առաջադրված խնդիրները լուծումները: Սեղմագրում ներկայացված են ատենախոսության հիմնական դրույթները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության թեմայի արդիականությունը, նրա գիտական նորույթը, գիտագործնական նշանակությունը, ինչպես նաև ստացված տվյալների հավաստիությունը և արված հիմնավոր եզրակացությունները հիմք են տալիս **Էրիկ Ջավենի Մարտիրոսյանի «Դեռահաս դպրոցականների ֆիզիկական պատրաստության օպտիմալացումն աթլետիկական վարժությունների կիրառմամբ»** թեմայով ատենախոսությունը համարել ավարտուն, ինքնուրույն գիտական աշխատանք:

Ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, իսկ ատենախոսն անկասկած արժանի է հայցվող մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին՝ ԺԳ.00.02 «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» (ֆիզիկական կուլտուրա) մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս՝ ՀՖԿՍՊԻ-ի սպորտի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի պրոֆեսոր, մանկ.գիտ.դոկտոր՝



Ա.Ա. Չատինյան

Հաստատում եմ

Պրոֆեսոր Ա.Ա. Չատինյանի ստորագրությունը
ՀՖԿՍՊԻ-ի ՄՌԿԸԲ-ի ղեկավար



Ա.Հ. Մազմանյան

16.10.20թ.